Կարծիք

Հասմիկ Ալբերտի Կոնջոյանի ՝ «Նախադպրոցական և կրտսեր դպրեցական տարիքի երեխաների կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական մեթոդները» վերնագրով ատենախոսության մասին՝ ներկայացված հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ԺԹ. 00.05 «Զարգացման և կրթության հոգեբանություն» մասնագիտությամբ

Որակյալ կրթությունը բոլոր ժամանակներում և հասարակարգերում միշտ էլ եղել է հասարակության զարգացման և քաղաքակրթության կարևորագույն պայման և գրավական :Բացառություն չի կազմում նաև մեր ՝ ներկա ժամանակաշրջանը, առավել ևս, որ այն բնութագրվում է թվային աշխարհի մատչելությամբ և ակնհայտ ազդեցությամբ, տեղեկատվական հսկայածավալ հոսքով, անձի ձևավորման պայմանների բովանդակային փոփոխությամբ: Այդ ամենն առաջ է բերում կրթական բարեփոխումների, նոր ,ոչ ավանդական հոգեբանամանկավարժական մոտեցումների մշակման և ներդրման անհրաժեշտություն: Այդ առումով ատենախոսության թեման շատ արդիական և խոսուն է :

Ատենախոսության ներածական մասում պատշաճ ձևով ներկայացված են թեմայի արդիականությունը, գիտական վարկածը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ներածության մյուս բոլոր անհրաժեշտ հատվածները, և ինչը որ շատ արժևորում է աշխատանքը՝ որակյալ և արդյունավետ կրթության հիմնախնդիրը համադրված է հոգեբանական առողջության հիմնախնդրի հետ:

Ակնհայտ է, որ ատենախոսը աշխատանքն իրականացնելիս օգտագործել է հարուստ պատմական աղբյուրներ , քանի որ պատմական ակնարկը պարունակում է մեծաքանակ ինֆորմացիա՝ տարբեր ժամանակահատվածներում հոգեբանամանկավարժական գործունեություն ծավալած հեղինակների

աշխատանքների վերլուծությամբ, որը խոսում է հեղինակի լավատեղյակության և կատարած ուսումնասիրության խորության մասին :

Ատենախոսությունն արժեվորվում է նաև հեղինակի կողմից իրականացված լայնածավալ փորձարարական հետազոտությամբ, որի մասնակիցների պատկառելի թիվը՝ 690 , և կիրառված մեթոդների առատությունը և հուսալիությունը /դիտում, մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ,մեթոդիակներ՝հեղինակությամբ Ռավենի, Տորրենսի, Կետտելի, Ռոզենցվեյգի և այլն//, վկայում են հեղինակի ջանադիր աշխատանքի և գիտական բծախնդիր մոտեցման , ինչպես նաև խնդրի համակողմանի ուսումնասիրվածության մասին :

Աշխատանքին առանձնակի կարևորություն և լրջություն է հաղորդում նաև երկրորդ գլուխը , որը ի մի է բերում , ներկայացնում է կատարված փորձարարական հետազոտությունները և վերլուծությունները ՝ համակարգված տալով երեխաների հուզական, ճանաչողական ոլորտների առանձնահատկությունները :Ակնհայտ է, որ հեղինակն աշխատել է հետևողականորեն ՝ հաջողությամբ իրականացնելով իր առջև դրված խնդիրները և զարգացնելով աշխատանքի տրամաբանությունը:

Հարկ է նշել , որ ատենախոսությունն ամբողջությամբ ոչ միայնշատ արդիական և պահանջված աշխատանք է , այլ ունի անառարկելի տեսական և գործնական նշանակություն, կիրառման և զարգացման մեծ հեռանկար :

Վերոնշյալ արժանիքների կողքին , համենայն դեպս , աշխատանքում տեղ են գտել նաև որոշ բացթողումներ, որոնք , սակայն էական չեն , հեշտ շտկելի են և ամենևին չեն նվազեցնում հետազոտության արժեքը . Դրանք են.

1.հետազոտության ընտրակզմում ընդգրված են տարաբնույթ՝ ըստ կրթական գործընթացի մոտեցումների, ուսումնական հաստատությունների սովորողներ, ցանկալի կլիներ աշխատանքում ներկայացված տեսնել դրանց տվյալները տարբերակված և համեմատված

2.Ցանկալի կլիներ եզրակացություններում տեսնել ավելի շատ ձևակերպումներ հեղինակի կողմից մշակված և կիրառված նոր մեթոդի արդյունքների մասին, որը

աշխատանքում բավականաչափ հանգամանորեն և համոզիչ ներկայացված է , քան ավանդական մեթոդերի թերությունների մասին :

Հ.Ա. Կոնջոյանի ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն հետազոտություն է և իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից նախատեսված 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ ԺԹ.00.05 " Զարգացման և կրթության հոգեբանություն" մասնագիտությամբ հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում, որոնց համար առաջարկում եմ ատենախոսության հեղինակին շնորհել հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ընդդիմախոս՝ հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ Հասմիկ Սոսի Հարությունյան

Հասմիկ Սոսի Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Հայաստանի Եվրոպական Համալսարանի գիտական քարտուղար՝
Գոռ Մանասյան

«ՀԵՀ»
"EYA"
"EUA"
00436097